

ԶՈՒԽՐԱ ԵՐՎԱՆԴՅԱՆ Բանասիրական գիտությունների թեկնածու

ԳՐԻԳՈՐ ԳՈՒՐՁԱՂՅԱՆ. ԽՈՀԱԳՐՈՂԻ ԻՆՔՍԱԿԵՐՊԱԿՈՐՄԱՆ ԱՐՎԵՍՏԸ

Բանալի բառեր՝ կենսարժեքներ, տիեզերք, գերերևույթ, մարդիրադություն, կամարաշար, խորաշերտ:

Ճանաչողների հավաստմամբ գործ ու խոսքով սովորական մարդկային օրինաչափություններից դուրս Գրիգոր Գուրզադյանը բացառիկ է նաև իր ստեղծած գեղագիտական աշխարհով։ Իր աշխարհ-տիեզերքին մահկանուցիներին մոտ չքողած հանձարեղ աստղաֆիզիկոսը նրանց առաջ կրնկի վրա բաց է պահում ինքնօրինակ հարստությամբ առանձնացող իր ստեղծագործական աշխարհի դրները։ Այդ աշխարհում կարդալ-սովորելու, պաշարել-հարստանալու այնքան նյութ կա, որ կիերիքի մի ամբողջ սերնդի՝ վերանայելու շատ կենսարժեքների դերը կյանքում, գուցե և ճշտորշելու իր դավանած արժեհանարգային կողմնորոշչիներից (հավատ, հույս, սեր, իդեալ, պատկերացումներ բարու և չարի, լավ ու վաստի, արդարության և անարդարության, գեղեցիկի և տգեղի) որոշների նորովի ընկալումները արագընթաց այս դարում։

Զգրեր Գրիգոր Գուրզադյանը՝ իր և իր ընթերցողի աշխարհում մի գունեղ անկյուն հաստատապես դատարկ կմնար։ Ինչպես Գաբրիել Գարսիա Մարկեսն է ասում. «Մի բան հաստատ է. գրողությունը կոչում է, որից հնարավոր չէ փախչել, և նա, ով ունի այն, պետք է գրի...»:(1) Տիեզերքի հետ գրուցող մեծ մտածողը պիտի գրեր, նաև պիտի նկարեր...

Գրողի՝ իրական և պատմական ժամանակի ու տարածության մեջ ծավալվող իրավիճակներ, դեպքեր ու դեմքեր ներկայացնող պատումները ընթերցողին տեղափոխում են յուրատիպ մի աշխարհ, որտեղ նա վկան է դառնում ոչ միայն հեղինակի իմացաբա-

*Հոդվածն ընդունվել է 15.11.2016:

Հոդվածը տպագրության է երաշխավորել բ.գ.դ, պրոֆեսոր Հովհաննես Մուսայելյանը:

նական և իմաստասիրական մտորումների հիմնական առարկայի՝ Մեծ Տիեզերքի («Cosmos»-ի), և Փոքր Տիեզերքի (Մարդու) գեղարվեստական կերպավորմանը, այլև հենց իր՝ չափումների մեջ չտեղավորվող տաղանդի տեր մարդու յուրօհնակ ինքնակերպավորման ողջ ընթացքին:

Գրողի ինքնակերպավորման արվեստի առանձնահատկությունների մասին մեր դիտարկումները ներկայացնելուց առաջ հատկանշենք հենց իր հայեցումներից մեկը՝ «Եվ Երաժիշտը, և բանաստեղծն ու նկարիչը, որոնք օժտված են հզոր տրամաբանությամբ, հախուրն երևակայությամբ ու փոթորկալից զգացումներով, կարող են տեսնել, բացել ու կանխատեսնել բաներ, որոնք սովորական առումով մատչելի կարող են համարվել միայն գիտական մտածելակերպին։ Համենայն դեպք, տիեզերքի փիլիսոփայական ընկալումն ու մեկնաբանությունը հավասար չափով մատչելի պետք է համարել բոլոր այն անհատականությունների համար, որոնք օժտված են մեծ ընդհանրացումներ անելու կարողությամբ։ Այսպիսիք ծնվում են ոչ շատ հաճախ, բայց ստեղծագործության համարյա բոլոր բնագավառներում՝ հավասար չափով»։ (2)

Գրիգոր Գուրգաղյանը հզոր տրամաբանությամբ գերերևույթ էր գիտության բնագավառում։ Նա իր անսահմանելի տաղանդի շնորհիվ, Սիլվա Կապուտիկյանի խոսքով ասած, «այս փոքրիկ ժողովուդին հանեց տիեզերք», հախուրն երևակայությամբ էր նկարչության մեջ։ «....Նա նկարում է բնության կյանքը, նկարում է այն, ինչն ինքնին ինքնատիպ է, այն, ինչն իրեն ուրախացնում է կամ տիսրեցնում...» (3), փոթորկալից զգացումներով ու խոր իմաստնությամբ էր գրականության մեջ։ «Գուրգաղյանը գրում է այնպես, ինչպես հաստատ միայն ինքը կարող է գրել, կաստերն ու երևույթներն անցկացնելով իր ուրույն ընկալումների ու զգայությունների միջով, իր հարուստ ներաշխարհի միջով»։ (4) Սիով բանիվ՝ նա բացառիկ «մարդ-իրադարձություն» էր՝ իր տիեզերական գոյությամբ ու մտածողությամբ։ Առնչվելով Գուրգաղյան «մարդ-իրադարձություն» ստեղծած գեղագիտական աշխարհի հետ՝ առավելապես ես զգում, որ դու՝ որպես տիեզերքի մի հյուլե, գտնվում ես «Երկու աշխարհների՝ անսահման մեջի ու անսահման փոքրի արանքում։ Երկու սահմաններն եւ՝ հավասար չափով անհասանելի ու անըմբռնելի», և որ գտնվում ես ««կախված» դրանց արանքում»։ (5)

Գուրգաղյանական ստեղծագործություններում թեմաներին ներհյուս ծավալվող խոհ-դատումների, իմաստախոսությունների,

հոյզ-ապրումների ընթացքի դիտարկումներն ու երթեմն փակագծված ասելիքի բացումը խորապես օգնում են գերերևույթորեն ներհայեցող մեծ մարդու դիմանակարի ամբողջականացմանը։ Հընթացս պատումների զարգացման կերպավորվող գիտնական-գրողը դառնում է իր կերտած պատմահրական կերպարների կենսականորեն անբաժանելի մասը։ Իաձախ հենց նրա կերպարի տեսլականով են գոյավորվում, մարմնավորվում ու կենսականացվում ամենքն ու այն ամենը, ինչի մասին գրում է։ Գրիգոր Գուրզադյանինը նաև կարող էր լինել Մարիո Վարգաս Լյոսայի այն խոսքը, թե՝ «Ին ներքին կյանքը կառուցված է այն ամենի շուրջ, ինչ գրում եմ և ինչ գրելու եմ»։ (6)

Ընթերցողին ներքաշելով իր ստեղծած գրականության ինքնատիպ աշխարհը՝ Գրիգոր Գուրզադյանը նրան դարձնում է իր ունկնդիր-գրուցակիցը՝ մտածել-խորհելու, դասեր առնել-տալու, ապրել-հիւզելու անսպառ նյութ տալով նրա մտքին ու հոգուն։ Այնքան բնական, անբանագբոս են հյուսվում պատումները, այնքան մտերիմ են հնչում խոսքերը, որ ընթերցողն ինքն է տողերում փնտրում գրողին, խոսքաշերտերում որոնում նրա բնավորության, վարքագծի ու կենսահայեցողության արտահայտում-դրսնորումները և, աշխարհայացքի հիմնական հատկանիշների պեղում-հայտնաբերումով, գծագրում մեծ ստեղծագործողի նախատիպը չունեցող կերպարը։

Գուրզադյանի գեղագիտական աշխարհում կերպավորված հերոսը, բնական է, անանձնական արժեքներին ներթափանց, նաև անձնական արժեքներ կրող է, ուստի և գրողը ստեղծագործական դաշտ է բերում իր կենսաբանական ես-ի խնդիրը ևս։ Պետք է ասել, որ Գրիգոր Գուրզադյանի ստեղծած գեղարվեստական գրականության մեջ եսի ինքնաբացահայտումները յուրատիպ դրսնորումներով են։ Տիեզերական ներհայեցումներով գրողը Մեծ տիեզերքի մեջ ունեցած իր Փոքր տիեզերքում սեփական ճշմարտության օրենքներն ունի։ Գրողի՝ աշխարհայացքային համակարգը ավելի քան իրատեսական է։ այն կազմող տարրերը հանձարեղ մարդու՝ մեր հայեցությանը երթեմն հասանելի, մեծ մասամբ՝ անհասանելի կերպով ապրած կյանքի դասերով են գոյավորվել։ Այս աշխարհում իր կյանքի և դերի ձիշտ դիտարկումը օգնել է նրան ինքնահատուկ համոզմունքներով ու դիրքորոշումներով ապրել ու կենսականացնել իր կերտած գեղագիտական աշխարհը։ Ստեղծագործական ինքնատիպ հայտածումներով ձևավորված գուրզադյանական այդ

աշխարհում առանձնանում են հիմնորոշ սկզբունքներ, որոնք ենթագիտակցությունից սկիզբ առնող զգացողություններ են արթնացնում, մտածելու կերպ թելադրում, վարքականոն ու գոյակերպ պայմանավորում: Ինքն իր և մարդկության կենսափորձից հայտածած դասերով ապրած լինելով՝ որոնք նաև մեզ է մատուցում ինքնօրինակ իմաստախոսություններով ու խտամտքերով: Ահավասիկ միքանիսը՝ «Մտածելը բոլոր ասպարեզներում է պետք: Դա մասնագիտություն չէ, դա մարդու էլություն է, նրա իսկական արժեքն է» (7), «Երեխան, որի դպրոցական կյանքն ինչ-ինչ պատճառներով չի ստացվել, ներեցեք դաժանությանս, ապագա չունի...Կան արժեքներ, որոնց մասին մենք չպիտի մոռանանք երբեք: Այդ արժեքներից ամենամեծը դպրոցն է...»(8), «Ես ներքին կապ եմ տեսնում լեզվի նկատմամբ ունեցած վերաբերմունքի և ժողովրդի ինտելեկտի, նաև, ինչու չէ, պետության հզորության միջև» ... (9)

Գիտական աշխարհում հզոր անհատականության հաստատած կենսագրությանը հընթաց՝ գրող Գուրգաղյանի ներաշխարհն էլ ի՞ր կենսագրությունն է հյուսել ու այն հանձնել խոհագրական գրականության ջերին, որոնցում տարակերպ պատկերումներով ու պատումներով դրսնորվում են իրենից անպակաս անձնական ցավի ու մաքառման տառապանքի զգացողությունները: Հարկ է նշել, որ, համենայն դեպս, այդ ցավ ու տվյալտանքի, մաքառման տառապանքի պատկերումներում գերակա են գրողի տիեզերածին ամենաստեղծ սերը, անկոտրում ոգին և մշտառկա անխախտը՝ լուսավոր հավատը: Նա հավատում է, որ, ի վերջո, Մեծ ու Փոքր տիեզերքներում տիրելու է նախասահմանված ներդաշնակությունը:

Մեր այս բարդ ու տարազան ժամանակներում, երբ «Աշխարհի ինտելեկտուալ կարգը վերատեղադրված է մարդկանց մտածողության մեջ» (Կարլ Հենրի), հերոսի նոր մոդել է կյանքի կոչվում: Այդ հերոսը գոյավորում է ազգային նոր վարքականոն թելադրող գաղափարներ, ձևավորում արժեքային համակարգեր: Սա չարժեքների ժխտմամբ ոգեղեն նոր որակներ սկզբնավորող հերոսի մոդել է, որի մեջ տեսնում ենք ինչպես հեղինակային հայեցակետերի ու սևորումների կենտրոնացումը, այնպես էլ՝ նրա մտակարողական կառույցի յուրատիպությունը: Գեղագիտական այն հեռանկարը, որ գրողը տեսանելի է դարձնում իր ստեղծագործական առաջադրույթի մեջ, ընթերցողին համակում է խորին համոզմունքով, որ գրողական հայտածումների ուղին հեղինակի հետ անցնելու է՝ գեղագիտական նորահաստատումների վկան ու մասնակիցը դառնալով:

Անընդհատ ստեղծագործական ինքնության նորանոր ուղիներ հաստատող Գուրզադյանը ընթերցողին օգնում է ոչ միայն թափանցելու հեղինակային անպարփակ մտածումների խորքերը, այլ նաև զգալու իր ստեղծագործությունների աշխարհմտածողությունը, որի չափումը, իրոք, տիեզերական է:

Անընդհատ մտորում-դատումների, ներհայեցումների մղող իմաստախոսությունները, իրերի, երևույթների իմաստ-էությունների բացահայտում-վերլուծությունները, անսպասել գյուտ-պատկերներով անզուգական դատողությունների տարակերպ մատուցումները գուրզադյանական խոհագրությունների անժխտելի առանձնաշնորհներն են, որոնք, անվերապահորեն, արձակ խոսքի այդ տեսակի մեջ մնայուն ու պատվավոր տեղ են ապահովում իրենց համար, անշուշտ, հարստացնելով հայ գրականության, մեզանում այնքան էլ շատ տարածում չունեցող, այդ պատումաձևով:

Մարդկային ու հասարակական հնչեղություն ունեցող գուրզադյանական խոհականությունը բովանդակավորում է կենսական կարևորություն ունեցող տրամադրություններով: Գրողի հայեցողական խորհրդածությունները, նկարագրությունների խորապատկերների վրա ապշեցուցիչ պարզությամբ մատուցվող ասելիքը, գեղարվեստական հիասքանչ հնարանքներով ու հնարքներով ստեղծված պատկերները, հնչանք և գեղագիտական ապրումի հուզական նախատրամադրվածությունը մեծապես օգնում են նորանոր հայտածումներով բացահայտելու աշխարհի գեղագիտական գնահատման գուրզադյանական դիտանկյունները: Պետք է ասել, որ տիեզերական մտածողությամբ գիտնական-խոհագրողի դիտարկումները, որոնք գիտակցական մակարդակում վերարտադրվում են գեղարվեստական պատկերների միջոցով, աննկարագրելի են իրենց ազդեցության զորությամբ: Այս առանձնագիծը գրողի ստեղծած գրականության գեղագիտական հիմնարար ձեռքբերումներից է:

Գրիգոր Գուրզադյանի գեղագիտական աշխարհի հետ «հանդիպման» պահի պարզեցած առեղծվածային զգացողությունը բնորոշելի է իր իսկ խոսքերով՝ ասված այն պահի համար, որ ինքն ապրել է՝ հայտնվելով Ֆլորենցիայի Սանտիսիմա Աննուցիատա հրապարակում՝ երեք կողմից շրջափակված Բրունելլեսկու հռչակավոր կամարաշարով. «...Սա երևի այն հազվագյուտ պահն է մարդու կյանքում, երբ նա, կարծես, սկսում է չափսոսալ իր աշխարհ գալու համար»: (10)

Հազվադեպ տրված հարցագրույցներից մեկում հանդիպում ենք

Գրիգոր Գուրզադյանի ինքնաբնորոշող մի խոսքի՝ «Իմ դիտողականությունը սուր է, ես շատ բաների կարող եմ միանգամից հետևել, բայց ընտրողականություն կա, այն միշտ կանգ է առնում լավ բանի վրա, որտեղ զարգացում, շարժում կա»: (11) Իրոք, ապշեցուցիչ, հզոր դիտողականություն: Ինչպես է պատկերում-ներկայացնում արվեստի գործերն ու ճարտարապետական կորողները. ապշել կարելի է հենց ոճի հիասքանչությունից. ոժվար է անգամ օրինակ նախընտրելը: Այնուամենայնիվ, փորձենք: **Կենետիկի Սուրբ Սարկո տաճարի կամարաշարը**. «Եթե կան պահեր, զգացողություններ, անհնարին գրչին տալու, երևի դա' է... Այդ կամարաշարը մի հրաշք է, մի հսկա սիմֆոնիա, շքերթ կամարների, տիեզերական տեսիլ...» (12), քիչ հետո՝ «իր թեթևամիտ պերճությամբ ու ճշացող կոկետությամբ» **Դոժերի պալատը** «ոչ այլ ինչ է, քան ճարտարապետության հանձարեղ թյուրիմացություն, եթե ոչ հանձարեղ անհեթեթություն», ահա և **Կոլիզեումը**. այն «հռոմեական ճարտարապետության հանձարի ճիշն է, ահրելի ուժի մի պոռթկում, անդրաշխարհային մի տեսիլ, որը կարծես թափառելով հավերժության մեջ տիեզերական անսահմանությունով մեկ՝ չգիտես ինչու, վայրէջքի տեղ է ընտրել այս հողագունդը» (13), չոշանցենք **Հարշեկուտի տաճարը** Ղեր-Էլ-Բահարիիում. «Մարդու շունչ է կտրվում. դա մի հուժկու սիմֆոնիա է, հազարավոր փողային գործիքներից պոռթկացող մի դղրդալից սիմֆոնիա, Ստակովսկին կամ Ֆոն Կարայանը այդ տեսարանի առաջ գլխի խելացնոր թափահարումով վեր կնետեհին զույգ ձեռքերը այդ ցնորամիտ սիմֆոնիայի հնչյունները տիեզերքի հեռավոր անկյունները հասցնելու համար...» ... (14)

Գրիգոր Գուրզադյանի խոհագորությունները, ոչ միայն որպես ինքնատիպ խտացումներ հեղինակի ինքնատիպ անհատականության և հզոր բանականության, այլ նաև որպես գեղարվեստական խոսքի հրաշալի արտահայտություններ, պետք է կարդալ, վայելել ու մտածել, մտածել ու կարդալ՝ նորից կարդալու ու մտածելու... վայելելու համար: Թերևս նաև այս հատկանշականի մեջ է գուրզադյանական մեծության առեղջվածքը:

Գիտական հենքով դիտարկումների, իմաստասիրական ձևակերպումներով մեկնաբանությունների, իմաստախոսություններով, առինքնող խոսքի հմայքներով հագեցած ինքնատիպ հյուսվածքներ են անխստիր բոլոր էստեները: «Մարդու և աստղերի խորհրդավոր տիեզերքը», «Տիեզերքն ու մարդը», «Մարդը տիեզերքում», «Սարոյանական տիեզերքը», «Կոսմիկական կատաստրոֆա», «Գիտություն-արվեստ... Ընթացքը»... Ո՞րը չնշես... խո-

հազրություններ, որոնք մեծ հայեցողի հմաստասիրական մտորումներն են՝ հարուստ խորաշերտերով, հմաստավոր արտահայտություններով ու խտամտքերով։ Գուրզադաշտնի պարագայում դույզնինչ վերամբարձ չի հնչի, եթե ասենք, որ նրա ստեղծած խոհագրական գրականության բովանդակությունը Մեծ Տիեզերքի և Սարդութիեզերական եզակի էատեսակի բովանդակության վերլուծության, նրա ստեղծարար անսպառ կարողության պանծացումն է՝ փառերգության հնչողությամբ։

Գուրզադաշտական խոհագրությունների առանձնագծերից մեկն էլ հայտնիներից ու մեծերից ճիշտ պահին ու միշտ տեղին մեջբերվող վկայությունների, բնութագրիչ խոսքերի, հմաստախոսությունների ու խտամտքերի առատությունն է. դրանք պատումներում վերածվում են յուրատիպ պատկերավորման միջոցների՝ հարստացնելով ոչ միայն հեղինակային խոսքն ու ընթերցողի հմացական աշխարհը, այլև դաշնում են խոհագրողի ինքնակերպավորման յուրատիպ դրսւորումներ։ Նոր բան չենք ասում. այն, թե մարդը մեծերի որ միտքն է իր համար դարձնում դիտարկման, հայեցման ու մտածումի նյութ, երբեմն էլ վարքագիծ թելադրող կողմնորոշիչ, վկայում է նրա և մեծի հոգևոր հարազատությունը։ Գրիգոր Գուրզադաշտի խոհագրական գրականության էջերում ասվածի հարյուրավոր վկայությունների ենք հանդիպում։ Երբ դրանք իրար մոտ են բերվում, համարյա ամհնարին է դաշնում որկիցե մեկին նախապատվություն տալը։ Խոհագրողը մեջբերումներ է անուն հին աշխարհի փիլիսոփաներից՝ խտամտքերի շուրջ արտահայտելով իր հայեցումները։ Հապա՝ ««Ստրուկը ստրուկ է իր բնույթով...»։ Սա նրա (Ղեմոկրիտի- Զ. Ե.) համոզմունքն էր... Քիչ անց ու նրանից անկախ նույնը կասի Արիստոտելը. «Ստրուկը ստրուկ է ի բնե, ի ծնե...»։ Երկու խոշոր մտածողներ՝ տիեզերական ընկալումների ընդունակ, նույն բանն են ասում ստրուկի հարցում... Սա մտածել է տալիս... Այդ բառը՝ ստրկահոգի, ստեղծվել է հավանաբար ոչ հենց այնպես, ուաներքին էությունն է մարդու, մի որոշակի աստիճան, մակարդակ մտքի, մտածողության, այլ բնավ ոչ սոցիալական վիճակ... Այնպես որ, այո՛, Ստրուկը ստրուկ է ի ծնե, ի բնե...»։ (15) Երբեմն էլ խոհագրողն իր հայեցումներն արտահայտում է ինքնահատուկ հումորով միջարկելով։ Բերենք նաև մի օրինակ։ Խոսքը նորից Ղեմոկրիտի մասին է. «Իսկ այն ինչ նա կանաց մասին է ասում, արդեն ոչ կատակով և ոչ էլ հեգնանքով, թղթին տալու բան չէ... Բայց դրանք կարող է ասել, իհարկե, առանց տատանվելու ամեն մի տղամարդ՝ շատ բան տեսած, շատ բան քաշած... (ոա չի վերաբերում այս տո-

ղերի հեղինակին).... Բայց նա, այնուամենայնիվ, մի լավ բան ասել է. «Կնոջ զարդը լռակյացությունն է...»: Չլինելու բան...»: (16) Իսկ ի՞նչ մերբերումներ է ընտրել մեծերի մասին մեծերից: Ահա Ցիցերոնը Ղեմոնիքիտի և Պլատոնի մասին. «Եվ եթե Ղեմոնիքիտի և Պլատոնի գրվածքները կամ ճառերը բանաստեղծություններ չեն ուղղակի իմաստով, դրանք, բոլորի վկայությամբ, շատ ավելի պոետիկ են, ավելի բանաստեղծական, քան շատ պոետների բանաստեղծությունները: Նրանց գրվածքներում թափ կա, սրընթացություն ու բառապաշար նաև՝ հարուստ, սքանչելի...»: (17) Ղիոզենես Լաերոցու խոսքը, թե՝ «Չախտի մոռանալ Ղեմոնիքիտի ասածը՝ խոսքը ստվերն է գործի... Եվ եթե վատ է ստվերը, այսինքն՝ խոսքը, մի՞թե ավելի վատ չի դառնա ինքը՝ գործը...»: (18)

Հատկապես կենսագրական հիմքով խոհագրական էջերը հագեցած են ապրումների տարերանգ խտացումներով հարուստ պատկերներով. դրանք հեղինակ-հերոսի հոգու խռովքի գեղարվեստական մարմնավորման փայլուն արտահայտություններ են, որոնցում խոհ-պատկերների ծավալվող ընթացքը կարելի է համեմատել պոետական վայելչախտոսության ու գեղարանության հետ:

Գուրզադյանը՝ որպես իր ստեղծագործության առանցքային թեմաներից հանդիսացող հայրենապաշտության ու բնապաշտության գաղափարի կրողն ու արտահայտիչը, երբեմն կոշտ, երբեմն նրբամիտ մեղմասացությամբ իր գեղարվեստական խոսքը թաթախումօծում է այնպիսի պատկերավորությամբ, որ, թվում է, գործ ունես հայրենի եզերքը, նրա վանք ու մատուռները, նրա եկեղեցիներն ու քարակերտ հուշարձաններից մնացած պատահիկ-նշխարները ոգիացնող-կերպավորող քնարական արձակի հետ: Հայրենիքի ոչ թե մտածին, տեսլական, այլ իրական բովանդակությունը գուրզադյանական գրականության լեզվատարածքում գոյավորում է անասելի գեղեցկությամբ պատկերների մի հարուստ աշխարհ: Ահավասիկ՝ մի փոքրիկ կտոր այդ աշխարհից. Կաքավաբերդը. «...Գալիս է գարունը... տաքանում են ժայռերը, ծյունը հետ է քաշվում, հողն է սկսում ոուռչել փիսրուն բլղուրի նման, երևում են առաջին ծիլերը... կանաչն է բռնում սար ու ծոր, ծաղկներ անհամար՝ տարածված լանջերով մեկ, գույների խրախճանք է, ալպիական փարթամություն:իսկ վերևում՝ բարձր, լաջվարդ կապուտակի վրա, արծիվն է սահում թևատարած... Կաքավաբերդ, դու երանություն ես, երազ...»: (19)

Գեղագիտական ինքնահատուկ արտածումների միջոցով ապահովելով միջավայրի ներկայությունը՝ գրողը ժամանակի իրակա-

նության խորաշերտերը թափանցող և քաղաքացիական սրափի մոտեցումներով առանձնացող գործեր է ստեղծում, երբ թեման ազգային աշխարհայացքային հիմնախնդիրներին է վերաբերում: Դիտարկման հաստատումն են տարաթեմա խոհագորությունների էջերում տեղ գտած նրա բազմաթիվ մտորումները, իմաստավիրական մտքերն ու դատողությունները, վերլուծում-մեկնաբանումները մեր ժողովողի պատմական ու իրօրյա ճակատագրի վերաբերյալ. «Կաքավաբերդը մտածել է տալիս... Այն ստեղծվել է դժմդակ ժամանակներում, երբ գոյատևելու խնդիր կար և ձնշող անորոշությունը գալիք ժամանակների: Երբ չկային սպասելիքներ և ոչինչ հուսադրող:Ես չգիտեմ, թե ով է եղել Կաքավաբերդը ստեղծող իշխանը, բայց պարզ է արդեն, որ նա չի մտածել, մտքովն իսկ չի անցկացրել հավաքել ունեցած-չունեցածը, կապել-կապկապել տունտեղ, առաջը զցել երեխաներին, ընտանիքը ու կորչել, հեռանալ այս ավերված երկրից և փնտրել հանգստություն, ապահովություն օտար հողի վրա...»: (20) Հայության հավաքական աշխարհայացքի կենսականությունն անառարկելի գերակայություն ունի «աշխարհի հետ, բայց մայր հողին կառչած» Գուրզադյանի գեղագիտական աշխարհում:

Մեծ Տիեզերքն իր հավատամքի հիմք և գեղագիտական աշխարհացքի կենտրոնը կարգած գրողի նվիրական երազանքը տիեզերքի մի հյուլեն կազմող հայրենիքը՝ Հայաստան աշխարհը, դեռևս Քսենոփոնի վկայած «Մեծ, հարուստ և բարեկեցիկ» (21) երկիր տեսնելն է: Այս առումով պետք է առանձնացնել նրա տածած անպարփակ սերը հայրենի եզերքի հանդեպ: Աշխարհահռչակ գիտնականն այն հայեցումն ունի, որ հայրենիքի արքեստիպը՝ հող հայրենին, հայի ներաշխարհում հաստատուն արժեքի Վերածված, նրա կեցության հիմքը գոյավորող գլխավոր կողմնորոշչին է: Այն անիրականի չափ առեղծվածային ազդեցություններ ունի նրա թե՛ֆիզիկական, թե՛ հոգևոր կյանքում: Թերևս պատահական չէ նաև, որ գրողի գեղագիտական հիմնարար ձեռքբերումներից է համարվում պատկերաստեղծման անզուգական վարպետություննը. մասնավորապես շեշտենք՝ գուրզադյանական խոհագորությանն առավել բովանդակալի որակներ են հաղորդում հուզական զգացմունքայնությամբ ու հայրենապաշտության հարուստ լիցքերով տողորված քնարական գեղումները, պատմական էքսկուրսները, անզուգական, ապշեցուցիչ զգայնությամբ ստեղծված քնապատկերները:

Նորություն չենք ասում. ընդհանրապես՝ ժողովրդի համար կե-

ցության իիմքերի ձանաչողությունն սկսվում է նաև իր նախնյաց ստեղծած մշակութային արժեքների համակարգային ընկալմամբ, որը և մեծապես ազդում է նրա համահավաք հոգեբանության ու աշխարհայացքի վրա: Եռաստ Կասսիրերի բնորոշիչ խոսքը մեջբերենք. «Ֆիզիկական և բարոյական աշխարհում ոչ մի բան, ոչ մի բնական երևույթ կամ մարդկային գործողություն իր բնույթով ու էությամբ չի կարող բացառվել արվեստի ոլորտից, որովհետև ոչ մի բան չի կարող ընդդիմանալ նրա ձևակազմից ու ստեղծարար պրոցեսին»: (22) Ստեղծագործողի ներհայեցական դաշտ բերվող այս գաղափարը ազատություն է ընձեռում, բացում միտք ու ծիրքի բոլոր դրաները, ուժ ու թափ տալիս ճշմարիտ տաղանդի տարածան դրսևորումներին: Իսկ Գրիգոր Գուրզադյան մտքի հսկայի պարագայում այն, պետք է ասել, աներևակայելի ծիրեր է բացում. Նրա «Ֆիզիկական և բարոյական աշխարհում» կատարվող երևույթների ինքնակերպ բացահայտումները և դրանք արվեստի նյութ դարձնելու հզոր կարողությունը ոչ միայն «ձևակազմից ու ստեղծարար» գործընթացներ է կենսականացնում, այլև գոյավորում է ազգային մտածողության մի նոր որակ, որի գերհատկանիշը հպարտ արժանապատվությունն է ունեցած արժեքային կողմնորոշիչների նորովի ընկալումներով ձևավորված:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գաբրիել Գարսիա Մարկեսի և Մարիո Վարգաս Լյոսայի երկխոսությունից: <http://nyut.am/archives/20732>
2. Գր. Գուրզադյան, Տիեզերքը ավի մեջ, «Զանգակ-97» հրատ., Եր., 2005, էջ 17:
3. Լ. Անանյան, Լ. Մկրտչյան, Գրիգոր Գուրզադյանի աշխարհը, Գր. Գուրզադյան, Կոսմիկական կատաստրոֆա, «Զանգակ-97» հրատ., Եր., 2004, էջ 352:
4. Նույն տեղում, էջ 354:
5. Գր. Գուրզադյան, Տիեզերքը ավի մեջ, էջ 210:
6. newmag.am/Mario-vargas-ilosa/
7. Գր. Գուրզադյան, Կոսմիկական կատաստրոֆա, էջ 346:
8. Նույն տեղում, էջ 344-345:
9. Նույն տեղում, էջ 348:
10. Գր. Գուրզադյան, Կաքավաբերդի առեղծվածը, էջ 44:
11. <http://www.tert.am/am/nevs/2013/08/20/grigor-gurzadyan/843882>
12. Գր. Գուրզադյան, Կաքավաբերդի առեղծվածը, էջ 22:

13. Նույն տեղում, էջ 72:
14. Նույն տեղում, էջ 218:
15. Գր.Գուրզադյան, Մի սիրո պատմություն, «Զանգակ-97» հրատ., Եր., 2004, էջ 140:
16. Նույն տեղը:
17. Նույն տեղում, էջ 141:
18. Նույն տեղում, էջ 142:
19. Գր.Գուրզադյան, Կաքավաբերդի առեղծվածը, էջ 97-98:
20. Նույն տեղում, էջ 103:
21. Քսենոփոն, Անաբասիս, Երևան, 1970, էջ 81:
22. Էթնստ Կասմիրեր, Էսե մարդու մասին, Սարգիս Խաչեն. Փրինթինֆո, Եր., 2008, էջ 242:

ԱՄՓՈՓՈՒՄ

ԳՐԻԳՈՐ ԳՈՒՐԶԱԴՅԱՆ. ԽՈՀԱԳՈՂՈՂԻ
ԻՆՔՍԱԿԵՐՊԱՎՈՐՄԱՆ ԱՐՎԵՍՏԸ

ԶՈՒԽՐԱ ԵՐՎԱՆԴՅԱՆ

Գրիգոր Գուրզադյանի՝ իրական և պատմական ժամանակի ու տարածության մեջ ծավալվող իրավիճակներ, դեպքեր ու դեմքեր ներկայացնող խոհագրությունները ընթերցողին տեղափոխում են մի աշխարհ, որտեղ նա վկան է դառնում ոչ միայն հեղինակի իմացաբանական և իմաստասիրական մտորումների հիմնական առարկայի «Cosmos»-ի, և Մարդու գեղարվեստական կերպավորմանը, այլև հենց իր՝ չափումների մեջ չտեղավորվող տաղանդի տեր մարդու յուրօրինակ ինքնակերպավորման ողջ ընթացքին:

Հոդվածագիրը նշում է, որ գրողն իր դավանած գեղագիտական հիմնասկզբունքների միջոցով օգնում է ընթերցողին՝ վերանայելու կենսարժեքների դերը կյանքում, ձշտորոշելու արժեհամարգային կողմնորոշիչների նորովի ընկալումները, արագընթաց այս դարում:

РЕЗЮМЕ

ГРИГОР ГЮРЗАДЯН: ИССКУСТВО СВОЕОБРАЗНОСТИ МЫСЛЯЩЕГО ПИСАТЕЛЯ ЗУХРА ЕРВАНДЯН

Ключевые слова: жизненные ценности, космос, феномен, человек-событие, аркада, глубокие слои.

Рассудительные работы Григора Гюрзадяна, представляющие события и лица, ситуации, разворачивающиеся в реальном и историческом времени и пространстве, переносят читателя в мир, где он становится не только свидетелем гносеологических и философских размышлений вокруг основной темы автора - Космоса и художественного изображения Человека, но и всего процесса своеобразного изображения себя самого - человека неизмеримого таланта.

Автор статьи отмечает, что писатель, посредством своих основных эстетических принципов, помогает читателю пересмотреть роль экзистенциальных ценностей в жизни, по-новому определяя восприятие ориентиров системы ценностей в этом стремительном веке.

SUMMARY

GRIGOR GURZADYAN:ART OF PECULIARITY OF THE INTELLIGENT WRITER

ZOUKHRA YERVANDYAN

Key words - life principles, cosmos, phenomenon, man of event, arcade, deep layers.

Prudent works of Grigor Gurzadyan presenting events and characters, as well as situations that are developing in real and historical time and space are taking the reader to the world, where he becomes not only the witness of gnosiological and philosophical basic theme of the author –Cosmos, and artistic portrayal of a Man, but for the whole process of peculiar depiction of him - the person, whose talent cannot be measured by any yardstick.

The author of the article mentions, that the writer by means of his fundamental aesthetic principles, helps the reader to review the existential values of life, newly specifying perception of value system key points in this jet-age.